

# ԵԳԻՊՏԱՅԱՅ ԱԶԳ. ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԴԻՍՈՒՄԸ

## ԵՐԵՔ ՄԵԾԵՐՈՒՆ

Եգիպտահայ Ազգ. Խորհուրդի կեր. վարչութիւնը հետեւեալ հեռագիրը յղած էր, Գեղե.ին, Մոսկուայի մէջ գումարուած Երեք Մեծ Տէրութեանց Արս գործոց նախարարներուն.

«Եգիպտահայ Ազգ. Խորհուրդը՝ գիտակիչ Մոսկուայի մէջ ներկայիս գումարուող Խորհրդաժողովին պատմական կարեւորութեանը և Երեք Մեծ Տէրութեանց յարումին արդարութեան և ռամկավարութեան սկզբունքներուն, կ'օգտուի այս առիթէն ձեր բարձր ուշադրութեան յանձնելու համար թրք. դրաման տակ զանուող հայկ. հողերուն մեր Հայրենիքին վերադարձուելուն հարցը:

«Այս մասին, Եգիպտահայ Ազգ. Խորհուրդը ինքզինքը կը հռչակէ բոլորովին համերայիս (սօլիսեր) Մ. Նահանգներու Հայ Ազգ. Խորհուրդին կողմէ Միացեալ Ազգերու Սան Ֆրանչիսքոյի Խորհրդաժողովին ներկայացուած յաւազրին, 1945ի Յունիսին, և Հայկ. Իստին պաշտպանութիւնը կը վստահի Խ. Հայաստանի կառավարութեան՝ յիշեալ Իստին միակ իրաւատէրը:

«Վստահ ան օժանդակութեան զոր մեր արդար պահանջներուն պիտի ընծայեն երեք ռամկավարական Մեծ Տէրութիւնները, որոնք կռուեցան յանուն արդարութեան և ազատութեան, կը խնդրենք հաւատալ, Ձերդ վսեմութիւնք, մեր յարգալից զգացումներուն հաւաստիքին:

Ի դիմաց կեզր. վարչութեան

Ատենադպիր

Ատենապետ

Մ. ՊԱՆԱՅԵԱՆ

ԱԼ. ՍԱՐՈՒԽԱՆ

ԾԱՆՕԹ.— Կր տեղեկանանք քե Եգիպտահայ Ազգ. Խորհուրդը նոյնիմաստ հեռագիր մը յղած է նոյնպէս ներկայիս Լոնտոնի մէջ գումարուած Միաց. Ազգերու Կազմակերպութեան: